ՀՏԴ 82-9

Լրագրություն

Սամվել ԲԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի ասիստենտ
Էլ.փոստ՝ samvel.artv@gmail.com

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅՈՒՄ 2020Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ ԱՐՑԱԽԻ ԴԵՄ ՍԱՆՁԱԶԵՐԾՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Հոդվածում կարևորվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմից հետո տեղեկատվական անվտանգության ոլորտին պատշաճ ուշադրություն դարձնելը: Հատկապես նշվում է հակահայկական հրապարակումներով առանձնացող ադրբեջանական տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրության կարևորությունը՝ որպես ԱՀ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների բացահայտման, անհրաժեշտ պաշտպանական միջոցների ներդրման, Արցախում ապրող հայ հասարակության տեղեկատվության ընկալման հմտությունների զարգացման, ադրբեջանական տեղեկատվական ահաբեկչությանը դիմակայելու անհրաժեշտ միջոց:

Այս նպատակով դիտարկվում է Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական քաղաքականությունը 2020 թվականի արցախյան պատերազմից հետո՝ Արցախում լայն տարածում գտնող սոցիալական մեդիայի որոշ ռեսուրսների միջոցով: Հոդվածում ներկայացվում են տեսական ու գործնական մակարդակները՝ բացահայտելով հակահայկական տեղեկատվական քաղաքականության օրինակներն ու զարգացումները:

Բանալի բառեր՝ տեղեկատվական, պատերազմ, ագրեսիա, սոցիալական, մեդիա, մանիպուլյացիա, քարոզչություն, ատելություն, ինֆոգեն, անվտանգություն:

С. Балаян

ИНФОРМАЦИОННАЯ АГРЕССИЯ АЗЕРБАЙДЖАНА В СОЦИАЛЬНЫХ МЕДИА ПОСЛЕ ВОЙНЫ, РАЗВЯЗАННОЙ

ИМ ПРОТИВ РЕСПУБЛИКИ АРЦАХ 27 СЕНТЯБРЯ 2020 ГОДА

В данной статье подчеркивается важность уделения должного внимания сфере информационной безопасности после войны, развязанного Азербайджаном против Республики Арцах 27 сентября 2020 года.

В особенности, отмечается важность изучения азербайджанских информационных источников, которые отличаются своими антиармянскими публикациями, как необходимое средство обнаружения угроз информационной безопасности Республики Арцах, внедрения необходимых защитных мер, развития навыков восприятия информации армянским обществом, противодействия азербайджанскому информационному терроризму.

С этой целью рассматривается антиармянская информационная политика Азербайджана после арцахской войны 2020 года, посредством некоторых ресурсов социальной медии, широко распространяющийся в Арцахе. В статье представлены теоретические и практические уровни, раскрывая примеры и развития антиармянской информационной политики.

Ключевые слова: информационный, война, агрессия, социальный, медиа, манипуляция, пропаганда, ненависть, инфоген, безопасность.

S. Balayan

THE INFORMATION AGGRESSION OF AZERBAIJAN IN SOCIAL MEDIA AFTER THE WAR UNLEASHED AGAINST THE REPUBLIC OF ARTSAKH ON 27 SEPTEMBER 2020

This article emphasizes the importance of paying due attention to the sphere of information security after the war unleashed by Azerbaijan against the Republic of Artsakh on 27 September 2020.

In particular, mention is made of the importance of studying Azerbaijani information sources, which are distinguished by their anti-Armenian publications, as a necessary means of detecting threats to the information security of the Artsakh Republic, and of introducing the necessary protective measures, developing the skills of Armenian society in perceiving information and countering Azerbaijani information terrorism.

To this end, the anti-Armenian information policy of Azerbaijan after the Artsakh war of 2020, through some resources of social media, which is widely disseminated in Artsakh, is being considered. The article presents theoretical and practical levels, revealing examples and development of anti-Armenian information policy.

Key words: information, war, aggression, social, media, manipulation, propaganda, hatred, infogen, security.

Արցախի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից շարունակվող տեղեկատվական, քարոզչական հարձակումները, հատկապես 2020թ. արցախյան վերջին

պատերազմից հետո նոր, աննախադեպ ծավալների է հասնում՝ մեծ ընդգրկվածություն ապահովելով սոցիալական ու ավանդական մեդիատիրույթներում: Մարդկային ռեսուրսներ ու տեխնիկական նոր ու արդիական միջոցներ կիրառելով՝ Ադրբեջանը հետևողականորեն տեղեկատվական ահաբեկչությամբ հոգեբանական ճնշման տարբեր գործողությունների համախումբ է փորձարկում Արցախում ապրող մարդկանց վրա՝ տեղեկատվական պատերազմում հետապնդելով Արցախի հայաթափման նպատակը: Արցախի բնակչության շրջանում տագնապի ու խուճապի մթնոլորտ ստեղծելու փորձերը պետական մակարդակով արտոնեց այդ երկրի նախագահը պատերազմից հետո իր ուղերձներից մեկում, իսկ 2021թ հոկտեմբերի 18-ին «Ազերթաջ» պետական լրատվական գործակալության փոխանցմամբ, հանդիպումներից մեկում ընդգծեց, որ Ադրբեջանը հաղթել է Հայաստանին նաև տեղեկատվական ճակատում[1]:

Համաձայն Ա. Վ. Մանոյլոյի տեսության՝ յուրաքանչյուր տեղեկատվական-հոգեբանական գործողություն հասարակության ինքնակամ հպատակության նպատակ ունի, որն ապահովվում է հասարակության գիտակցության վրա հոգեբանական ազդեցության տեխնոլոգիաների կիրառմամբ[2]: Տեղեկատվական ագրեսիան իրենից ներկայացնում է մարդկանց գիտակցության մանիպուլյացիայի և հասարակության բարոյալքմանն ուղղված ժամանակակից ձևը:

Պետք է փաստել և խորությամբ ընկալել այն իրողությունը, որ Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը ծառայում է այդ երկրում նոր ձևավորվող հանրության յուրովի ինքնահաստատման գործին և սերմանում է ազգային բնույթի ագրեսիվ՝ հայատյաց գաղափարախոսություն, ինչը համաշխարհային տեղեկատվական հարթակում լուրջ մարտահրավեր է հայկական զույգ պետությունների և, ընդհանրապես, հայության համար: Առհասարակ, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության մեջ զանգվածային լրատվամիջոցների՝ հասարակական կարծիք ձևավորելու հնարավորությունը օգտագործվում է բավականին ճկուն: Ընդգծեմ միայն սոցիալական և քաղաքական հզոր նշանակությունը՝ սոցիալական ինտեգրման և ազգային գիտակցության ձևավորման տեսանկյունից: Ադրբեջանն իր անկախության 30-ամյա գոյության ընթացքում թշնամու կերպարը ձևավորեց մեդիառեսուրսների լայն կիրառության ու դրա բովանդակության մանրազնին

---

[1] *Տե՛ս https://azertag.az/ru/xeber/Prezident_Ilham_Aliev_i_pervaya_ledi_Mehriban_Alieva_vstretilis_s_predstavitelyami_obshchestvennosti_Fizulinskogo_raiona_zalozhili_fundament_Memorialnogo_kompleksa_i_vosstanovleniya_goroda_VIDEO-1902410:*

[2] *Տե՛ս* ***Манойло А.В.*** *«Информационно-психологическая война: факторы, определяющие формат современного вооруженного конфликта». Киев: psyfactor.org (2005), Материалы V Международной научно-практической конференции «Информационные технологии и безопасность», вып. №8, 2005 г., с. 73-80.. Дата обращения: 29 мая 2020.*

կառուցումով, ինչպես նաև արտադրանքի վերահսկումով՝ ապահովելով տոտալ գրաքննությունը երկրում:

Ադրբեջանական պետական գերատեսչությունների կողմից ստեղծվում են հակահայկական քարոզչություն իրականացնող տեղեկատվական տարբեր հարթակներ՝ զուգահեռ կատարելագործելով գոյություն ունեցող նմանատիպ բովանդակությամբ այլ հարթակներ ևս: Արցախյան վերջին՝ 2020թ. պատերազմից հետո հայկական լսարանին ուղղված քարոզչական ու հոգեբանական ազդեցության միջոցները տեղեկատվական դաշտում նորովի դրսևորվեցին: Մասնավորապես, 2021թ. ամռանը Ադրբեջանի առաջին փոխնախագահ ու առաջին տիկին Մեհրիբան Ալիևայի նախաձեռնությամբ ստեղծվեց Karabakh.Center ադբեջաներեն, անգլերեն ու ռուսերեն լեզուներով կայքէջը[1]: Այն ստեղծվել է աշխարհին Ղարաբաղի պատկանելության հարցի հանրայնացման և «հայերի վայրագությունների» մասին շինծու բովանդակությամբ նյութեր տարածելու համար: «Ուրբիցիդ» բաժնում տեղադրված են արցախյան գոյամարտի տարիներին պատերազմական գործողությունների հետևանքները, որոնք բնութագրվում են որպես «հայկական ագրեսիայի հետևանք»՝ կցելով ավերածությունների ու այդ տարածքների նախկին տեսքը բնութագրող 10.000 լուսանկարներ ու տեսանյութեր: «Հակամարտություն» և «Հանցագործություն» բաժիններում ներկայացվում են «պատմական փաստաթղթեր ու վերլուծական նյութեր»: Հակահայ բովանդակությամբ նյութեր տարածելու և թշնամություն քարոզելու համար ստեղծված այս հարթակը ակտիվ է նաև սոցիական մեդիայում, հատկապես Ֆեյսբուք, Թվիթեր, Ինստագրամ սոցիալական ցանցերում:

Պատերազմից հետո ադրբեջանական կողմը սոցիալական ցանցերում՝ հատկապես վերոշյալ հարթակներում տարբեր էջեր է ստեղծում, ինչը նպատակաուղղված է հայ հասարակության վրա որոշակի հոգեբանական ազդեցություն գործել, ինչպես նաև ներքին լսարանի համար ցանկալի տեղեկություններ տարածել: 2021թ. հունվարին ստեղծվել են «Khankendi.city» թվիթերյան և ֆեյսբուքյան էջերը, որոնք ադրբեջանական քարոզչական հայտնի թեզերը տարածում են ադրբեջաներեն, անգլերեն, ռուսերեն և հայերեն գրառումներով[2]: Ուշադրության է արժանի տվյալ ֆեյսբուքյան էջի երաժշտական միջոցառման մասին ծանուցումը (հրավերը), որն, իբր, նախատեսվում է 2026 թվականին, երբ, ըստ տվյալ էջի քարոզչության թեզի, նախատեսվում է քաղաքի անվտագության ապահովումն իրականացնել «բացառապես ադրբեջանի զինված ուժերի» միջոցով:[3]

Տվյալ տիրույթում կարելի է հանդիպել նաև տեսանյութերի, որոնք ստեղծվում են քաղաքում ապրող ադրբեջանցիների հիշողությունների հիման

[1] https://story.karabakh.center/ru/o-proekte:
[2] https://www.facebook.com/Khankendi.city:
[3] https://www.facebook.com/events/150038446370723?ref=newsfeed:

վրա, և վերջիններս, ներկայանալով որպես փախստականներ, հնչեցնում են հակահայկական արտահայտություններ և ամրապնդում ադրբեջանական քարոզչության՝ թշնամի հայի կերպարը ներքին լսարանում:[1]

Հայ հասարակությանը հոգեբանական ճնշումների ենթարկելու փորձերը արտահայտված են նաև ադրբեջանական սոցիալական մեդիայի այլ տիրույթներում ևս: 2021-ի տարեսկզբին են ստեղծվել թվիթերյան «Kelbecer/Kalbacar», «Shusha», «Azerbaijanis of Armenia», «Azerbaijani Refugees of Armenia» էջերը: Հակայկական տեղեկատվական թիրախներով առանձնանում է նաև «Talish_vestnik» թելեգրամյան ալիքը:[2] 24 000 հետևորդ ունեցող այս տիրույթն, օրինակ, մեծապես տարածում է ազգային փոքրամասնությունների «միասնությունը մեկ միասնական Ադրբեջանում»՝ պարբերաբար ցուցադրելով պատերազմում «աչքի ընկած» թալիշներին ու լեզգիներին[3]: Առավել ակտիվ է «Девичья башня» թելեգրամյան ալիքը, որը, ունենալով ավելի քան 28 000 հետևորդ, այդ թվում հայեր, գեներացնում է արցախյան լրահոսի սեփական դիտարկումներն ու վերլուծությունները՝ մշտապես թիրախավորելով ռուս խաղաղապահ առաքելությանը:[4]

Հակահայկական բովանդակությամբ մեկ այլ հարթակ էլ Ադրբեջանում գործարկել են YouTube-ում, որը կոչվում է VMedia: Հեղինակները նշում են, որ ծրագրի հիմնական նպատակն է «Հայաստանում ստեղծված ֆեյքերի, հատկապես պատմական ֆեյքերի բացահայտումը, և ձգտումն է ցույց տալ, թե ինչով են դրանք վտանգավոր առանձին պետության զարգացման ու անվտանգության, նաև ամբողջ տարածաշրջանի համար»: Ալիքը հետևորդների մեծ թիվ չունի, առանձնանում է մի քանի տեսանյութով, սակայն չի բացառվում, որ այն ապագայում կարող է ակտիվանալ: Սոցիալական ցանցերում ակտիվ է հատկապես կեղծ օգտատերերի մի մեծ խումբ, որը հայ հանրությանը մոլորեցնելու և ահաբեկելու նպատակով, հատկապես արցախյան լրահոսի շուրջ մեկնաբանություններ ու 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմում ադրբեջանցիների վայրագությունները հավաստող տեսանյութեր է տարածում:

Ուսումնասիրելով համացանցում օրեցօր ավելացող ու տեղեկատվական պատերազմի ավանդական ու նոր մարտավարությունները կիրառող Ադրբեջանի տեղեկատվական ահաբեկչության օրինակների մի մասը միայն՝ պետք է ընդգծել, որ մեծ հաշվով սոցիալական մեդիան Ադրբեջանն օգտագործում է ոչ միայն ներքին լսարանում այդ երկրի նախագահի «հաղթական կերպարն» ամրապնդելու, ներքին տարաձայնություններից

---

[1] https://www.facebook.com/Khankendi.city/videos/291341969069397:
[2] https://t.me/Talish_vestnik?fbclid=IwAR1R_RzX-WefWkz1aLPXN7YG5Dz3Pt93gD8zgSc9FXHmgIApKRSV7YcoUJc:
[3] https://t.me/Talish_vestnik/18333:
[4] https://t.me/MaidenTower/15089:

քաղաքացիներին շեղելու, այլև Արցախում բնակվող հայ հասարակության շրջանում ճնշվածության, ընկճվածության, պարտության զգացումի արմատավորումը, ինչպես նաև անորոշության ու հուսալքության խորացումը:

Նմանօրինակ գրոհ-գրառումները հայկական, և հատկապես արցախյան տեղեկատվական անվտանգության համար մասնագիտական տերմինաբանությամբ ինֆոգեն սպառնալիքներ են, որոնք արտահայտվում են մի շարք գործոններով՝ հասարակության շարքերում անվստահության, կասկածամտության սերմանում, հասարակական գիտակցության մանիպուլյացիա[1]:

Այս մարտահրավերներին դիմակայելու համար խիստ անհրաժեշտ է հատկապես Արցախում լուրջ ուշադրություն դարձնել տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնախնդիրներին՝ պաշտպանված տեղեկատվական ենթակառուցվածքներով ու արհեստավարժ մասնագետների ներգրավմամբ: Հատկապես կարևոր է մեդիագրագիտության, տեղեկատվական պատերազմների, դրա վարման ձևերի մասին իրազեկման մեծածավալ աշխատանքների իրականացումը՝ ակտիվ ներգրավելով հասարակական լայն շրջանակների: Այս ու մի շարք կարևոր այլ խնդիրների հնարավոր կլինի համակարգային լուծումներ տալ, եթե վերջապես փաստաթղթավորվի ու արդի զարգացումների համապատասխան գործի Արցախի Հանրապետության տեղեկատվական անվտանգության ապահովման և տեղեկատվական քաղաքականության ռազմավարությունը:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, բ.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

[1] *Տե՛ս **Նազարյան Հ. Զ.**, Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 146 էջ:*